## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի բնակավայրերի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/89 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/89-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2025 թվականի դեկտեմբերի 3-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Համադրման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել նախատեսված աշխատանքների ծավալների և գնի նվազեցում:

**Փոփոխության նկարագրություն՝** Պայմանագրի շրջանակում 2025 թվականի դեկտեմբերի 3-ին կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Պայմանագրի 5.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «5.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 96,324,860.00 (իննսունվեց միլիոն երեք հարյուր քսանչորս հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որից 16,054,143.33 (տասնվեց միլիոն հիսունչորս հազար մեկ հարյուր քառասուներեք դրամ երեսուներեք լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
2. Պայմանագրի Հավելված 1-ով ներկայացված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» աղյուսակի 6-րդ չափաբաժնի մասով «Գումար» սյունակում նշված «25,980,000.00» թիվը փոփոխվել է «19,018,376.00» թվով:
3. Պայմանագրի Հավելված 1.4-ով ներկայացված «ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ»-ի փոխարեն հաստատվել է Համաձայնագիր 12-ի Հավելված 1-ով ներկայացվող տարբերակը:
4. Պայմանագրի Հավելված 3-ով և Կողմերի միջև 2025 թվականի փետրվարի 25-ին կնքված համաձայնագիր 4-ի Հավելված 2-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց»-ը 6-րդ չափաբաժնի մասով փոփոխվել և հաստատվել է ըստ Համաձայնագիր 12-ի Հավելված 2-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** Պայմանագրի կատարման շրջանակում համադրման արդյունքում կատարվող աշխատանքների և ծավալների նվազեցման անհրաժեշտությունը և Պայմանագրի 8.5 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**